Միջոցառումը լուսաբանվել է Հանրային Հեռուստաընկերության կողմից:

**Եռօրյա ճամբարի մասնակցություն Թռրսգյուղում:** Հայկական Կարիտասի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան, որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակում հուլիսի 10-12-ը Թռրսգյուղում իրականացվեց եռօրյա կրթական ճամբար՝ «Ներառականություն, կրթություն, նորարարություն» խորագրով: Ճամբարին մասնակցում էին շուրջ 80 երեխաներ ծրագրի գործընկեր 7 դպրոցներից և Հայկական Կարիտասի 4 Փոքրիկ Իշխան ցերեկային կենտրոններից: Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոնից ճամբարին մասնակցել են **4** երեխա, որից **2** տղա, **2** աղջիկ:

**Ճանաչողական, Ուսումնական այց դեպի Երևան:** Մ/թ հուլիսի 21-ին կենտրոնի **22** սաների համար, որից **9** աղջիկ, **13** տղա իրականացվեց ճանաչողական, ուսումնական այց դեպի Երևան: Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի սաները ճանաչողական այցի շրջանակներում այցելեիցին Երևանի կենդանաբանական այգի՝ այգու կողմից իրականացվող սոցիալական պատասխանատվության շրջանակներում: Այստեղ երեխաները ծանոթացան վայրի բնության, դրա առանձին միավորների պահպանություն, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում և Միջազգային Կարմիր գրքում գրանցված վտանգված կենդանատեսակների պահպանման պատմությանը: Այգում երեխաները նաև դիտեցին կենդանիների ցուցադրական կերակրումները, շրջեցին կենդանաբանական այգում առկա բաժիններով: Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում երեխաները դիտեցին <<Չարլին և շոկոլադի գործարանը¦ արկածային հեքիաթ ներկայացումը:

Ճանաչողական այցի մասնակիցները այցելեցին նաև Սուրբ Աստվածածնին մատուռ:

Ուսումնական այցի արդյունքում երեխաները հաղորդակից դարձան մշակութային ու հոգևոր կյանքին, զարգացավ նրանց շփման, հաղորդակցման, ճանաչողական ոլորտը: Արշավին ընդհանուր ներկա են գտնվել 46 մասնակից՝ 17 /**5 տղա, 12 աղջիկ**/ Փոքրիկ Իշխան կենտրոնի շահառու երեխաներ, 2/ **1տղա, 1 աղջիկ**/ Փ Ի շրջանավարտ, Տնային խնամքի 14 շահառու և 1 կամավոր, Հայկական Կարիտասի 13 աշխատակից:

**Ճանաչողական, Ուսումնական այց դեպի Ստեփանավան:** Մ/թ հուլիսի 26-ին Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի **22** սաների համար, որից **13** աղջիկ, **9** տղա ճանաչողական այցի շրջանակներում այցելեիցին Ստեփանավանի Սոճուտ դենդրոպարկ, շրջեցին բուսաբանական այգու տարածքում առկա բնական անտառի ծառուղիներով, ծանոթացան զարդանախշերով բույսերին, ծառուղիներին, վայրի ծագում ունեցող բուսատեսակներին:
Ստեփանավանի Լոռէ էքստրիմ պարկում երեխաները մասնակցեցին արշավային ծրագրերի, ներառյալ ՝ մագլցումներ, խաղեր:
Ճանաչողական այցի մասնակիցները այցելեցին նաև Ստեփանավանի Սուրբ Սարգիս եկեղեցի: Այցը հնարավորություն ընձեռնեց համատեղել առողջությունը պահպանելու, վերականգնելու ամենալավ տարբերակը՝ մաքուր օդ, սոճիների փոշոտում, միաժամանակ հիանալ պատմամշակութային կոթողներով, հուշարձաններով, եկեղեցիներով, անվել տարածաշրջանին հատուկ կերակուրներով:

**Փառատոնի մասնակցություն Ալավերդիում:** Մ/թ հուլիսի 30-ին Հայկական Կարիտասի «Արագ արձագանքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ամենախոցելի ընտանիքներին» ծրագրի շրջանակներում Ալավերդի քաղաքում իրականցվել է սոցիալ-հոգեբանական միջոցառում՝ նվիրված Ընկերության Միջազգային Օրվան: Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոնից միջոցառմանը մասնակցել են կենտրոնից 11/3տղա, 8աղջիկ/ շահառու